

## ՍԵՐՈ ԽԱՆՁԱԴՅԱՆ

Հայ գրականությունը, համայն հայ մշակութային կյանքը, հայ հասարակական-քաղաքական միտքը ծանր կորուստ ունեցան՝ իր բեղուն կյանքի 83-րդ տարում վախճանվեց Սերո Խանձադյանը՝ գրողը, հրապարակախոսը, գործիչը:

Ջանգվածների հրապարակներում այլևս չի լսվելու նրա խռատ, հանդուգն, տիրական ձայնը, հայոց երկրային ու ժամանակային տարածքները այլևս չեն դրոշմվելու այդ մարտիկի և գիտնականի, այդ հետախույզի և վավերագրողի, այդ աշխարհագրի և մատենագրի քայլերով, հայ գրականության, հայոց պատմության վաղվա առաջամարտիկը այլևս չի ակնկալվելու նրա խրախուսիչ կանչը իր թիկունքից - վաստակած, հոգնած նրա կյանքը իր ժողովրդի հավերժական երթից ետ է ընկել այսօր՝ 1998-ի հունիսյան այս օրը:

Ծնվել է 1915-ին, Գորիս: Ծանր մանկություն և պատանեկություն է տարել, ավելի քան ծանր երիտասարդություն, բայց դաժանության հարող այդ ծանրությունը կարծես հատկապես ստեղծված է եղել միայն հանուն այն բանի, որ տոկուն ու հաղթական մարտիկի կոփեն, նա պետք է փրկվեր և պայքարեր իր և մեր բոլորիս նախնու տանուլ տված հաղթանակները ետ բերելու և պետք է կռվեր իր և մեր նախնու չապրած կյանքերը ապրելու համար:

«Մեր գնդի մարդիկ», «Հողը», «Մխիթար սպարապետ», «Մատյան եղելությանց», «Քաջարան», «Թագուհին հայոց», «Հորս հետ և առանց հորս», ռազմաճակատային օրագրեր, «Անդրանիկ», «Նժդեհ» - 1949-ից վեր նրա գրական անդաստանը ոչ մի տարին երաշտ չի ճանաչել, գրական, հասարակական, քաղաքական հրապարակը նրա բացակայությունն ու լռությունը չի տեսել:

Քաղցի և մտավոր անլության տարիների վկա՝ նա ծարավի էր իրենից մշակութային կոթող բարձրացնել, և բարձրացրեց այդ կոթողը, որի իրական չափերը, որի իրական կարևորությունը մենք այսօր տեսնում ենք և վաղն ենք զգալու - նրա ձայնից, նրա խենթությունից, նրա իմաստությունից, նրա քաջությունից ու խոհեմությունից այլևս պարավաճ մեր պարապ հրապարակներում: